Շուշանիկ Կուրղինյան

Թե ցավերիս ծեծկող քամին թուլանար . . .

Թե ցավերիս ծեծկող քամին մեղմանար,
Օրս լքում ծաղկի նման չթոշներ .
Թե գեթ մի թույլ մխիթարանք ինձ հասներ,
Եվ մի անդորր իջներ կրծքիս ու մնար . . .

Թե կարիքը իր ոսկրալի մատներով
Լուծ չդներ հիվանդ, աներգ իմ հոգուն .
Ու չճնշեր ինձ միշտ այրի իրիկուն
Խորունկ, վշտի անարտասուք մորմոքով . . .

Արև, աստղեր, դուք էլ դև կամ հրեշտակ,
Դշխո երգիս անհաղթ գահին շուրջ-բոլոր
Կը չոքեիք դուք շարե շար, խեղճ մոլոր,
Ողջ էությամբ գրաստ-գերի ոտքիս տակ . . .

1910 թ . 6 փետրվարի